ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 51 - Ա

« 13 » ՄԱՐՏԻ 2023Թ.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018Թ. ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 21 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովների աշխատանքների կազմակերպման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2018թ. մարտի 14-ի թիվ 21 որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/13/2023

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
13 մարտի 2023 թվականի
N 51 որոշման

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ (ՀԱՏՈՒԿ) ԽՄԲԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՄ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՂԵԳՐՈՂ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԿ» ՓԲԸ-Ի ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

1. **«Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ՝**

Կարեն Ասատրյան՝ «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ,

Անուշ Խաչատրյան՝ «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի բուժքույր, հանձնաժողովի քարտուղար,

Հանձնաժողովի անդամներ՝

Լիլիա Կարապետյան՝ Վայոց ձորի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ,

Հասմիկ Ստեփանյան՝ «Եղեգնաձորի ԲԿ» ՓԲԸ-ի վիրաբույժ,

Սամվել Հովհաննիսյան՝ ՀԿԽԸ-ի ՎՁ ՄՄ-ի նախագահ: